ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 08.3/28493-2025

«10»_____12_____2025թ

«ԿԵՏ 33» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ,
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ ԹՂԹԱԿԻՑ
ՊԵՐՃՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
(gevorgyanperchuhi2@gmail.com)

Հարգելի Պերճուհի Գևորգյան

Ի պատասխան 2025 թվականի դեկտեմբերի 2-ի Ձեր հարցման՝ ներկայացնում ենք հետևյալը.

Հարց 1., 2. Քանի՞ աշխատող ունի նախարարությունը/գերատեսչությունը: Աշխատողներից քանի՞սն են կանայք:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն ունի 394 աշխատակից, որից 213՝ կին (տվյալները 2025 թվականի դեկտեմբերի 8-ի դրությամբ):

Հարց 3. Ներկայումս քանի աշխատող ունեք, ովքեր ունեն մինչև 3 տարեկան երեխա և չեն գտնվում երեխայի խնամքի արձակուրդում:

Ներկայումս նախարարությունում կա 3 աշխատակից, որոնք ունեն մինչև 3 տարեկան երեխա և չեն գտնվում երեխայի խնամքի արձակուրդում:

Հարց 4. Ներկայումս կա՞ն աշխատողներ, ովքեր ընտանիքի անդամի խնամքի արձակուրդում են: Եթե այո, խնդրում ենք նշել, թե քանի աշխատող կա և ինչ պայմաններով է արձակուրդում:

Ոչ, չկան:

Հարց 5., 6. Արդյո՞ք նախարարությունը/գերատեսչությունը, որպես գործատու, ունի ընտանիքամետ պրակտիկա կամ ընդունած քաղաքականություն: Եթե այո, ապա խնդրում ենք փոխանցել ընդունված քաղաքականության պատճեն կամ հղումը, կամ նկարագրել, թե ընտանիքամետ ինչ պրակտիկա է կիրառվում:

Նշում. Ընտանիքամետ է այն աշխատավայրը, որտեղ գործող քաղաքականություններն ու ընթացակարգերը հնարավորություն են տալիս աշխատողին սահուն, առանց սթրեսի համատեղել ընտանեկան կյանքն ու աշխատանքը: Կազմակերպության ընտանիքամետ պրակտիկաները կամ քաղաքականությունը/ները արդյո՞ք ուղղված են ճկուն աշխատանքային պայմաններին, վճարվող հավելյալ արձակուրդներ տրամադրելուն, երեխայի խնամքի աջակցությանը, աշխատողների հոգեկան և ֆիզիկական բարեկեցությանը, կարիերայի զարգացմանը: Եթե այո, խնդրում ենք նկարագրել, թե յուրաքանչյուր դեպքում ինչպես են դրանք կիրառվում պրակտիկայում:

Նախարարությունը չունի նման պրակտիկա կամ ընդունած քաղաքականութուն:

Հարց 7. Արդյո՞ք նախարարությունում կան հեռավար աշխատողներ, եթե այո, խնդրում ենք հայտնել, թե քանի հոգի է ներկայումս աշխատում հեռավար: Եթե կա հեռավար աշխատելու վերաբերյալ ընթացակարգ, խնդրում ենք տրամադրել պատճենը: Եթե չկա հեռավար աշխատելու վերաբերյալ ընթացակարգ, խնդրում ենք հայտնել, թե ինչ հիմքով և ինչպես է սահմանվել հեռավար աշխատելու վերաբերյալ պայմանավորվածությունը:

Նախարարությունում հեռավար աշխատողներ չկան:

Հարց 8., 9. Նախարարությունն ունի՞ ծնողական և կամ այլ տիպի արձակուրդ տրամադրելու պրակտիկա կամ քաղաքականություն, որն առաջարկում է օրենսդրությամբ սահմանվածից ավելին (օրինակ, ընտանիքի անդամին խնամելու վճարվող արձակուրդ, հայրության արձակուրդ՝ ավելի քան 5 աշխատանքային օր, և այլն): Եթե այո, խնդրում ենք նկարագրեք պրակտիկան կամ տրամադրեք համապատասխան քաղաքականության պատճեն: Նախարարությունն ունի՞ երեխայի կամ ընտանիքի անդամի խնամքի հարցերում աջակցության պրակտիկա կամ քաղաքականություն (օրինակ, մանկապարտեզի հարցում աջակցություն, խնամակալի վարձատրության փոխհատուցում և այլն): Եթե այո, խնդրում ենք նկարագրեք պրակտիկան կամ տրամադրեք համապատասխան քաղաքականության պատճեն:

Ոչ, չունի:

10., 10.1. Արդյո՞ք նախարարությունն ունի կրծքով կերակրելու սենյակ և/կամ խաղասենյակ: Եթե այո, խնդրում ենք հայտնել, թե երբ, ինչ չափանիշներով է ստեղծվել և կահավորվել:

Ոչ, չունի:

11. Նախարարությունն ունի՞ աշխատողների բարեկեցության և կարիերայի զարգացման ծրագրեր կամ քաղաքականություն (օրինակ, առողջության ապահովագրություն, հոգեբանի ծառայություններ, վերապատրաստումներ և այլն): Եթե այո, խնդրում ենք նկարագրեք պրակտիկան կամ տրամադրեք համապատասխան քաղաքականության պատճեն:

Նախարարության աշխատակիցները հիմնականում քաղծառայողներ են, իսկ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործման նպատակով նախատեսված են պարտադիր վերապատրաստումներ: Դրանից բացի, նախարարության աշխատակիցների համար երբեմն կազմակերպվում են տարբեր դասընթացներ՝ ըստ աշխատակիցների վերապատրաստման կարիքների:

12. Արդյո՞ք նախարարությունն իրականացնում է ընտանիքամետ քաղաքականությունների արդյունավետության գնահատում: Եթե այո, ապա խնդրում ենք նկարագրել, թե ինչ մեթոդով և ինչ նպատակով է արվում:

Ոչ, չի իրականացնում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

Ստորագրող
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ
1205870326

2025-12-10 17:46:59 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Կատարող՝
Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Անի Մարտիրոսյան
011597212